Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 15-03-2024 թ. որոշմամբ
«ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝	
1.1 Լրիվ անվանումը	«ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ 51 ՏԱՐԱԾՔ 47
1.3 Պետական գրանցման համարը	222.160.1318696
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2023-05-19
1.5 ՀՎՀՀ-ն	02890679
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)11201410
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	https://amca.am/
1.8 Էլեկտրոնային փոստը	info@amca.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝	
Օրենսդրության զարգացման կենտրոն հիմնադրամ	
Հայ իրավաբանական միություն Կալիֆորնիայի շահույթ չհետապնդող հանրային շահ հետապնդող կորպորացիա	
Հայկական բարեգործական ընդհանուր միություն	
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝	
Տիգրան Դադունց	
Գուրգեն Գրիգորյան	
Լևոն Գոլենդուխին	
Հարութ Ջեք Սամարա	
Արման Ալոյան	
Լենա Մինասյան	
Արկադի Սահակյան	
Քրիստինե Գյոնջյան	
Վանիկ Մարգարյան	
4. Կառավարչի անուն, ազգանուն՝	
Տաթևիկ Մատինյան	
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	11
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝	

8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Արբիտրաժային վարույթների իրակ անացման, վեճերի լուծման այլընտր անքային մեթ ոդների ապահովում, խրախուսում	301,739,414
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Արբիտրաժային վարույթների իրակ անացման, վեճերի լուծման այլընտր անքային մեթ ոդների ապահովում, խրախուսում	301,739,414	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	301,739,414	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	301,739,414	

Նշումներ՝

Աուդիտորական եզրակացությունը և ֆինանսական հաշվետվությունները ընդհանուր 24 էջ ծավալով կցված է Հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությանը:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 24 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by MATEVOSYAN GOHAR 6602810383
Date: 2024.06.24 21:44:03 AMT

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

ԵՐԵՎԱՆ, 2024

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Անդամների ցանկ
7	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
8	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
9	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի գտնվելու վայրը՝	**Հայաստանի Հանրապետություն**
Իրավական ձևը՝	Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Տնօրեն՝	Տաթևիկ Մատինյան

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0070, Ե.Քոչարի 19/8; հեռ.՝ (374 91) 43 53 84;

auditglobaudit@mail.ru; www.globaudit.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի ղեկավարությանը և հոգեբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի համաձայն (ՖՀՄՍ-ների):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* պարբերությունում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)*, և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Այլ հանգամանքներ

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները առաջին անգամ են ենթարկվում աուդիտի:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման և ներքին հսկողության համար:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Տնօրեն Դ. Հարությունյան

Աուդիտոր Կ. Շահինյան

2024 թվականի մարտի 11

Հոգեբարձուների խորհրդի անդամների ցանկ

Տիգրան Դադունց	նախագահ
Լևոն Գոլենդուխին	անդամ
Հարութ Ջեք Սամրա	անդամ
Լևոն Սահակյան	անդամ
Լենա Մինասյան	անդամ
Գուրգեն Գրիգորյան	անդամ
Արկադի Սահակյան	անդամ
Քրիստինե Գյոնջյան	անդամ
Վանիկ Մարգարյան	անդամ

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2023թ. հազար դրամ	2022թ. հազար դրամ
Շնորհներից եկամուտ	3	270,617	-
Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսեր	4	(109,427)	-
Վարչական ծախսեր	5	(42,862)	-
Այլ գործառնական ծախսեր	6	(2,702)	-
Գործառնական հավելուրդ/(պակասուրդ)		**115,626**	**-**
Այլ օգուտ/(կորուստ), զուտ		-	-
Հավելուրդ մինչև հարկումը		**115,626**	**-**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	7	(21,426)	-
Տարվա զուտ հավելուրդ		**94,200**	**-**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. մարտի 11-ին:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն»
հիմնադրամի տնօրեն Տաթևիկ Մատինյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2023թ.	2022թ.
		Հազար դրամ	Հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	815	-
Դեբիտորական և այլ ընթացիկ պարտքեր	9	26,558	-
Դրամական միջոցներ	10	1,117	-
		28,490	**-**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	65,601	-
Ոչ նյութական ակտիվներ	12	34,141	-
Հետաձգված հարկային ակտիվներ		471	-
		100,213	-
Ընդամենը ակտիվներ		**128,703**	**-**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	13	173	-
Հարկեր և այլ պարտադիր վճարներ	13	21,897	-
Արձակուրդային պահուստ	13	2,616	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**24,686**	**-**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	14	9,817	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**9,817**	
Ընդամենը պարտավորություններ		**34,503**	
Սեփական կապիտալ			
Կուտակված հավելուրդ		94,200	-
Ընդամենը սեփական կապիտալ		**94,200**	**-**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**128,703**	**-**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. մարտի 11-ին:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն»
հիմնադրամի տնօրեն

Տաթևիկ Մատինյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ. Հազար դրամ	2022թ Հազար դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Շնորհներց մուտքեր	301,739	
Այլ մուտքեր		
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով	(14,005)	
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	(97,553)	
Աշխատավարձի գծով վճարում	(27,699)	
Հարկերի և պարտադիր վճարների գծով վճարումներ	(51,792)	
Այլ գործառնական ելքեր	(4,940)	
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**105,750**	
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	-	
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(104,633)	
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**(104,633)**	
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Փոխառությունների ստացումից մուտքեր	-	
Փոխառությունների մարումից ելքեր	-	
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	-	
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	**1,117**	
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	-	
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	-	
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	**1,117**	

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2024թ. մարտի 11-ին:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն»
հիմնադրամի տնօրեն Տաթևիկ Մատինյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Ընդհանուր տեղեկատվություն	10
2	Պատրաստման հիմունքներ - հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական մոտեցումներ	11
3	Շնորհներից եկամուտ	18
4	Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսեր	18
5	Վարչական ծախսեր	18
6	Այլ գործառնական ծախսեր	18
7	Շահութահարկի գծով ծախս	19
8	Պաշարներ	19
9	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19
10	Դրամական միջոցներ	19
11	Հիմնական միջոցներ	20
12	Ոչ նյութական ակտիվներ	21
13	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	21
14	Ակտիվներին վերաբերող շնորհներ	22
15	Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ	22
16	Պայմանականություններ	22
17	Կապակցված կողմեր	23

1 Ընդհանուր տեղեկատվություն

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ Կենտրոն) հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է կանոնադրությամբ նախատեսված հանրօգուտ նպատակներ: 2023 թվականի մայիսին «Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն» հիմնադրամի ստեղծման մասին առաջին որոշումը ստորագրվել է կենտրոնի հիմնադիրների՝ «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի, Հայկական բարեգործական ընդհանուր միության և Հայ իրավաբանական միության կողմից: Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Հիմնադրամի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ իրավական ակտերի համաձայն և կանոնադրության հիման վրա:

Հիմնադրամի հիմնադիրներն են.

1. «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամը,

2. «Հայ իրավաբանական միություն»՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգում գրանցված կազմակերպությունը,

3. «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» (ՀԲԸՄ)՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Դելավեր նահանգում գրանցված կազմակերպությունը:

Հիմնադրամը գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 19.05.2023 թվականին, գրանցման համար՝ 222.160.1318696, ՁԿԴ 54061185, ՀՎՀՀ՝ 02890679, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, ք Երևան 0023, Արշակունյաց պող 51, տարածք 47:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է՝ 10 աշխատակից:

Կենտրոնի նպատակներն են.

- որպես մշտական գործող արբիտրաժային հաստատություն հանդես գալը;
- միջազգային և լոկալ արբիտրաժային վարույթների իրականացման ապահովումը;
- վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների ծառայությունների մատուցման ապահովումը;
- Հայաստանի Հանրապետությունում վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների, այդ թվում՝ արբիտրաժի զարգացմանը, տարածմանը և կիրառմանը, այդ ոլորտում օրենսդրության զարգացմանը և կատարելագործմանը նպաստելը՝ դրանով իսկ նպաստելով նաև արդարադատության մատչելիության և արդյունավետության բարձրացմանը ր դատարանների ծանրաբեռնվածության թեթևացմանը:

Կենտրոնի շահառուներն են՝

- Ֆիզիկականև և իրավաբանական անձիք, որոնց օգտին Կենտրոնի կողմից մատուցվում կամ կարող են մատուցվել մատուցվել ծառայություններ, կատարվում կամ կարող են կատարվել որոշակի վճարումներ, ինչպես նաև նրանց փոխանցվում կամ կարող են փոխանցվել Կենտրոնի գույքի որոշ մասը:

Կենտրոնը կարող է իրականացնել ձեռնատիրական գործունեություն, որը համապատասխանում և ծառայում է Կենտրոնի նպատակներին:

Կենտրոնի մարմիններն են՝

- Հոգաբարձուների խորհուրդը;
- Արբիտրաժային խորհուրդը;
- Տնօրենը:

2 Պատրաստման հիմունքներ-հաշվապահական քաղաքականության հիմնական մոտեցումներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Կենտրոնը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են անընդհատության հիմունքով, ինչը ենթադրում է, որ Կենտրոնի բոլոր ակտիվները կօգտագործվեն, և պարտավորությունները կմարվեն Կենտրոնի գործունեության բնականոն ընթացքի ընթացքում, առանց տեսանելի ապագայում Կենտրոնը դադարեցնելու կամ լուծարելու մտադրության:

Կենտրոնի շարունակական գործունեություն վրա մեծապես ազդող գործոնի և այդ գործոնի հետ կապված Կենտրոնի ղեկավարության գնահատականներն ու դատողությունները ներկայացված են ստորև:

Անընդհատությանը վերաբերող գնահատումներ և դատողություններ

Կենտրոնի ղեկավարությունը գնահատում է, որ այն կշարունակի իր գործունեությունը անընդհատության սկզբունքով:

Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել Կենտրոնի ֆինանսական դրությունը, ընթացիկ դրամական միջոցների մնացորդը, ընթացիկ պարտավորությունները և ֆինանսավորում հավաքագրելու կարողությունը նոր և առկա ծրագրերի իրականացման համար:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Կենտրոնի ֆինանսական հաշվետվություններում:

Կենտրոնի ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված;)

Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից;

Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա):

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.

ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը;

բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Կենտրոնը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ;
- Արտարժութային ռիսկ;
- Իրացվելիության ռիսկ:

Կենտրոնը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին:

Սույն ծանոթագրությունում ներկայացված են Կենտրոնի նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Կենտրոնի նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել, եթե սույն գրության մեջ այլ բան նշված չէ:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Կենտրոնի հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Դրամական միջոցներ;
- Վարկեր;
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և կրեդիտորական պարտքեր:

Դրամական միջոցների, կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Հոգաբարձուների խորհրդի նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ հնարավորինս բացառելու Կենտրոնի արդյունավետ գործունեությանը խանգարող հանգամանքների առաջացումը: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Կենտրոնը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

Դրամական միջոցներ բանկում

Կենտրոնը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի Կենտրոնի կողմից դրամական միջոցները սպասարկող << առևտրային բանկերը վստահելի են:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Հիմնադրամի գործարքներն արտահայտված են << դրամից տարբեր արժույթով:

Կենտրոնի արտարժութային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով կամ այլ արտարժույթով՝ պայմանավորված արտերկրներ կատարվող գործուղումներով, ինչպես նաև արտարժույթով արտահայտված ստացված ծառայությունների գծով: Այս ռիսկն, ըստ էության, Կենտրոնի կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Կենտրոնի ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Կենտրոնի՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն ըստ դասերի հետևյալն են.

Շենք, շինություններ	-	20 տարի
Մեքենաներ, սարքավորում	-	8 տարի
Համակարգչային տեխնիկա	-	1 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	8 տարի
Տնտեսական գույք	-	8 տարի
Փոքրարժեք հիմնական միջոցներ	-	1 տարի
Այլ հիմնական միջոցներ	-	8 տարի
Տեխնիկական սարքավորումներ	-	8 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	-	10 տարի
Հեղինակային իրավունքներ	-	10 տարի

Շնորհներ

Պետական շնորհը կազմակերպությանը ռեսուրսների փոխանցման տեսքով պետության կողմից տրամադրվող օգնություն է՝ կազմակերպության գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց:

Պետական շնորհները չեն ներառում պետական օգնության այն ձևերը, որոնց հնարավոր չէ խելամտորեն որևէ արժեք վերագրել, ինչպես նաև պետության հետ գործարքները, որոնք հնարավոր չէ տարանջատել կազմակերպության սովորական առևտրային գործարքներից

Կազմակերպությունը որպես շնորհ հաշվառում է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարությունից ստացված դրամական միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Պետական շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չպետք է ճանաչվեն, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ.

ա) կազմակերպությունը բավարարելու է դրանց կցված պայմանները. և

բ) շնորհները ստացվելու են:

Կազմակերպությունը շնորհները պետք է չափի ստացված կամ ստացվելիք **ակտիվի իրական արժեքով**:

Պետական շնորհները պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:

Կազմակերպությունը շնորհների վերաբերյալ պետք է բացահայտի **ֆինանսական հաշվետվություններում** ճանաչված պետական շնորհների բնույթը, գումարները և որպես եկամուտ չճանաչված պետական շնորհներին կցված և չկատարված պայմանները և այլ պայմանականություններ:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 18. «Հասույթ», ՀՀՄՍ 11. «Կառուցման պայմանագրեր» ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «Ժամանակի կոնկրետ պահին», թե «Ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Կազմակերպությունը պետք է հաշվառի գնորդի հետ պայմանագիրը միայն այն դեպքում, եթե՝

ա) պայմանագրի կողմերը հաստատել են պայմանագիրը (գրավոր, բանավոր կամ այլ սովորական բիզնես գործելակերպի համաձայն) և պարտավորվում են կատարել իրենց համապատասխան պայմանագրային պարտականությունները.

բ) կազմակերպությունը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքներին կամ ծառայություններին վերաբերող յուրաքանչյուր կողմի իրավունքները.

գ) կազմակերպությունը կարող է որոշակիացնել փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների վճարման պայմանները.

դ) պայմանագիրն ունի առևտրային բնույթ (այսինքն՝ պայմանագրի արդյունքում ակնկալվում է, որ կփոփոխվեն կազմակերպության ապագա դրամական միջոցների հոսքերի հետ կապված ռիսկերը, ժամկետները կամ գումարը). և

ե) հավանական է, որ կազմակերպությունը կստանա այն հատուցումը, որը կազմակերպությունը իրավունք ունի ստանալու, գնորդին փոխանցվող ապրանքների կամ ծառայությունների դիմաց՝ որպես փոխանակում:

3. Շնորհներից եկամուտ

	2023	2023
Շնորհներից հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներ	270,616	-
	270,616	-

Կենտրոնը 2023 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ Արդարադատության նախարարության հետ կնքել է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման պայանագիր N ՀՀԱՆԴՄ-10/23: Համաձայն պայմանագրի ՀՀ Արդարադատության նախարարությունը՝ որպես Դրամաշնորհ տրամադրող, պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կենտրոնին հատկացնել 301,739.4 հազար դրամ ՀՀ դրամ գումար, իսկ Դրամաշնորհ ստացողը պարտավորվում է արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիթորինգի իրականացում ծրագրի շրջանակներում հանդես գալ որպես մշտական գործող արբիտրաժային հաստատություն:

4. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսեր

	2023	2022
Կենտրոնի գործունեության լուսաբանման հետ կապված ծախսեր	(43,849)	-
Համակարգչային ծրագրերի սպասարկան և տպագրական ծախսեր	(11,032)	-
Տարածքի վարձակալություն, պահպանություն ու սպասարկում	(7,068)	-
Վճարովի ծառայություններ (խորհրդատվություն, թարգմանություն, գործուղում և վերապատրաստում)	(13,589)	-
Ներկայացուցչական ծախսեր	(27,295)	-
Կոնֆերանսների և հանդիպումների կազմակերպում	(6,424)	-
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	(170)	-
	(109,427)	-

5. Վարչական ծախսեր

	2023	2022
Աշխատակիցներին հատուցումների գծով ծախսեր	(37,770)	-
Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսեր	(1,685)	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(1,028)	-
Չփոխհատուցվող հարկեր, տուրքերի գծով	(729)	-
Այլ ծախսեր (կրթաթոշակի տրամադրում)	(1,650)	-
	(42,862)	-

6. Այլ գործառնական ծախսեր

	2023	2022
Չօգտագործված արձակուրդային պահուստի գծով	(2,616)	-
Արտարժույթի փոխանակման ծախսեր	(86)	-
	(2,702)	-

7. Շահութահարկի գծով ծախս

	2023	2022
Ընթացիկ հարկ	(21,897)	-
Հետաձգված հարկ	471	-
	(21,426)	-

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

	2023	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթը/(վնաս) մինչև հարկումը (ՖՀՄՍ)	15,626	-	-	-
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	20,813	18.0%	-	18.0%
Չնվազեցվող եկամուտների/ծախսերի ազդեցություն, զուտ	613	0.5%	-	-
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	21,426	18.5%	-	-

8. Պաշարներ

	2023	2022
Վառելիք	815	-
	815	-

9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2023	2022
Դեբիտորական պարտքեր հարկերի գծով	26,554	-
Տրված կանխավճարներ	4	-
	26,558	-

10. Դրամական միջոցներ

	2023	2022
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	1,117	-
Ազգային արժույթի դրամարկղ	-	-
	1,117	-

Դրամական միջոցները պահվում են ՀՀ առևտրային բանկերում:

11. Հիմնական միջոցներ

	Մեքենաներ, սարքավորումներ	Արտադրա-տնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				-
Առ 1 հունվարի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	9,501	17,276	40,484	67,261
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**9,501**	**17,276**	**40,484**	**67,261**
Կուտակված մաշվածություն				
Առ 1 հունվարի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	1,336	239	85	1,660
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**1,336**	**239**	**85**	**1,660**
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2022թ.	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**8,165**	**17,037**	**40,399**	**65,601**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 14.0 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ ունեն զրո հաշվեկշռային արժեք:

Ընկերության հիմնական միջոցների նկատմամբ չկան որևէ սահմանափակումներ:

12. Ոչ նյութական ակտիվներ

	Հեղինակային իրավունքներ	Համակարգչային ծրագրեր	Firmային անուններ	Ընդամենը
Սկզբնական արժեք				-
Առ 1 հունվարի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	1,982	22,366	9,900	34,248
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**1,982**	**22,366**	**9,900**	**34,248**
Կուտակված մաշվածություն				
Առ 1 հունվարի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	-	-	-	-
Նվազեցումներ	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	-	-	-	-
Ավելացումներ	2	23	82	107
Նվազեցումներ	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2**	**23**	**82**	**107**
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2022թ.	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**1,980**	**22,343**	**9,818**	**34,141**

Համակարգչային ծրագրերը ներառում են «ԱՎՌՈՄԻԿ» ՍՊԸ-ի կողմից կատարված համացանցային (www) էջի ձևավորման ծառայություններ (մեկնարկային փուլ)՝ 22,086 հազար դրամ արժեքով:

13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**2023**	**2022**
Առևտրային կրեդիտորական պարտքեր	173	-
Հարկերի գծով	21,897	-
Չօգտագործված արձակուրդային պահուստի գծով	2,616	-
	24,686	-

14. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Կենտրոնը 2023թ. նոյեմբերի 21-ին «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի հետ կնքել է պայմանագիր, համաձայն որի «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամը առանց փոխհատուցման պայմանի, Կենտրոնին է փոխանցել 9,900 հազար դրամի ոչ նյութական ակտիվներ՝ տարբերանշան և մշակված վիզուալ ուղեկցող նյութեր:

15. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Ընկերությունը կատարում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Հաշվապահական գնահատումները, սակայն երբեմն չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Ընկերության ղեկավարությունը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները գնահատելիս հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Ընկերության ֆինանասական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

16. Պայմանականություններ

Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը:

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում:

Ընկերությունը չունի ապահովագրության իր ակտիվների, գործունեության ընդհատման

կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերություն գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա:

17. Կապակցված կողմեր

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են.

1. «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամը,
2. «Հայ իրավաբանական միություն»՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգում գրանցված կազմակերպությունը,
3. «Հայկական բարեգործական ընդհանուր միություն» (ՀԲԸՄ)՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Դելավեր նահանգում գրանցված կազմակերպությունը:

2023 թվականին «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամը Կենտրոնին անհատույց փոխանցել է 9,900 հազար դրամի ոչ նյութական ակտիվներ:

17.1. Գործարքներ ղեկավար անձանակազմի հետ	**2023**	**2022**
Աշխատավարձ, ներառյալ սոցիալական ապահովության վճարներ	18,958	-

Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2024թ. մարտի 11-ին՝ տնօրեն Տաթևիկ Մատինյանի կողմից:

«Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն»
հիմնադրամի տնօրեն Տաթևիկ Մատինյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 24.06.2024 21:31